ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6. 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1905—1907 ԹԹ. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Ի. Լենինը, բազմիցս անդրադառնալով ռուսական առաջին ռևոլյուցիայի իրադարձություններին, կոչ էր անում մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ռևոլյուցիայի փորձը, պրոպագանդել նրա պայքարի ձևերն ու մարտական տրադիցիաները։

1905—1907 ԹԹ. ռևոլյուցիան սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի կոչեց և պատմական խոշոր նշանակություն ունեցավ նաև Ռուսաստանի ծայրամասերի ճնշված ժողովուրդների համար, մեծ ազդեցություն թողնելով նրանց ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ տնտեսական-կուլտուրական կյանքի զարգացման վրա։ Հետևապես այդ ժողովուրդների մղած ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը ևս սովետական պատմագրության կարևորագույն և առաջնահերթ խնդիրներից մեկն է։

Չնայած հրատարակված են պարտիական համագումարների, կոնֆերանսների նյութերը, հրապարակի վրա են Վ. Ի. Լենինի ուղեցույց հանդիսացող աշխատությունները, որոնց վրա հենվելով ու օգտագործելով տեղական հարուստ նյութերը կարելի էր վեր հանել ռուսական առաջին ռևոլյուցիայի պատմությունը այս կամ այն ազգային ծայրամասում, սակայն մինչև ռևոլյուցիայի հիսնամյակի օրերը սովետահայ պատմագրությունը աննշան գործ էր կատարել այդ ուղղությամբ։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսնամյակի առթիվ մեր պատմաբանները լուրջ աշխատանք կատարեցին 1905—1907 ԹԹ. Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ 1955 թվականի ընթացքում հրապարակ եկան և մասսաների սեփականությունը դարձան բազմաթիվ աշխատություններ՝ մոնոգրաֆիկ ուսումնասիրություններ, հոդվածների և փաստաթղթերի ժողովածուներ, գիտա-հանրամատչելի բրոշյուրներ։։

Այդ աշխատություններում ցույց է տրվում Հայաստանի տնտեսական վիճակը 19-րդ դարի վերջում և 20-րդ դ. սկզբում, բացահայտվում են սոցիալական-քաղաքական այն նախադրյալները, որոնք հիմք հանդիսացան ռևոլյուցիոն շարժումների համար։

Նշված ժամանակաշրջանում տնտեսական կյանքի զարգացման հետևանքով Հայաստանում ստեղծվեցին քիչ թե շատ խոշոր առևտրա-արդյունաբերական կենտրոններ, կազմակերպվեց բուրժուազիան և հասարակական նոր, ամենառևոլյուցիոն դասակարգը՝ պրոլետարիատը։

Մանր էր բանվորների իրավական, տնտեսական և քաղաքական դրությունը. անտանելի՝ նրանց աշխատանքային և կենցաղային պայմանները։

Կապիտալիզմի զարգացման հետևանքով ավելի էր ուժեղանում գյուղի քայքայման ու շերտավորման պրոցեսը։ Գնալով աճում էր հողազուրկ ու տակավահող գյուղացիների, քայքայվող գյուղական մանր տնտեսությունների թիվը, իսկ մյուս կողմից՝ ծնունդ էր առնում

---

1 *ա) Ս. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 ԹԹ. ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ։*

բ) Վ. Պարսամյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 ԹԹ. Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական Համալսարան, հայերեն և ռուսերեն լեզուներով։

գ) Ար. Մարուխյան, Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար 1905—1907 ԹԹ. ՀՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության սեկտոր։

դ) Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (հոդվածների ժողովածու), ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ։

ե) Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 ԹԹ. հոդվածների ժողովածու, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարան.

զ) Революционное движение в Армении 1905—1907 гг. (Сборник документов и материалов), Армянский филиал Института марксизма—ленинизма при ЦК КПСС, ЦГА АрмССР.

է) Д. Е. Габриэлян, Революция 1905—1907 гг. в Армении, см. Революция 1905—1907 гг. в национальных районах России, М., 1955, стр. 536—567.

գյուղական բուրժուազիան, և ուռճանում խոշոր կալվածատիրությունը։ Գյուղացիությունը գտնվում էր աղքատ, խեղճ ու թշվառ վիճակում։

Ազգային ծայրամասերում, այդ թվում Հայաստանում, 1905—1907 թթ. ռևոլյուցիան ուղղված էր նաև ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ և ուներ ազգային-ազատագրական բնույթ։ Այդ տեսակետից ազգային շրջանների աշխատավորական մասսաների ռևոլյուցիոն պայքարը ոչ միայն չէր խախտում ռուսական պրոլետարիատի համընդհանուր պայքարը, այլ լիովին համընկնում ու միաձուլվում էր նրա հետ։ Հայաստանի բանվորության և աշխատավոր գյուղացիության ելույթները կազմում են համառուսական ռևոլյուցիոն շարժման օրգանական մասը, նրա օղակներից մեկը։

Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի պատմությանը նվիրված հետազոտությունները ակնառու կերպով ցույց տվեցին, որ ռևոլյուցիոն շարժումների համար 20-րդ դ. սկզբում ստեղծվել էին բոլոր օբյեկտիվ պայմանները։ Դրա հիման վրա 1905—1907 թթ. Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ռուսական պրոլետարիատի օրինակով ու նրա հետ մեկտեղ, հանուն իրենց սոցիալական և ազգային ազատագրման ռևոլյուցիոն պայքարի ելան ցարական ինքնակալության դեմ և փառավոր էջեր գրեցին սուր պայքարի տարեգրության մեջ։ Դրանով փաստորեն ցույց տրվեց հայ բուրժուական պատմագրության այն տեսակետի կատարյալ սնանկությունը, ըստ որի, իբր Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների համար հող չի եղել, որ հայ ժողովրդին միշտ էլ հուզել է ոչ թե դասակարգային, այլ ազգային պայքարը։ Ընդ որում, բուրժուական պատմագրության տեսակետները։ ժխտվում են ոչ թե ընդհանուր խոսքերով կամ դեկլարատիվ հայտարարություններով, այլ անհերքելի փաստերով, այդ տարիների ռևոլյուցիոն շարժումների խորը և բազմակողմանի ուսումնասիրությամբ։

Հրատարակված աշխատությունների միջոցով հրապարակ եկավ հսկայական փաստական նյութ, որի շնորհիվ ճշտվեցին և նոր լուսաբանություն ստացան շատ դեպքեր ու փաստեր։ Փաստական նյութին մարքսիստական ճիշտ մեկնաբանություն տալու, ինչպես նաև հին տեսակետների վերանայման շնորհիվ, ըստ արժանվույն գնահատվեցին մի շարք պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներներ, անհայտության կամ ավելի ճիշտ դատապարտելի անուշադրությունից հանվեցին ռևոլյուցիոն շարժման շատ ակտիվ մասնակիցներ։

Այս ամենը, անշուշտ, նվաճում է սովետահայ պատմագրության համար։

Գնահատելով վերոհիշյալ աշխատությունների նկատելի արժանիքները՝ և նրանց հեղինակների կատարած դրական աշխատանքը, հարկ ենք համարում առավելապես ծանրանալ աշխատություններում տեղ գտած թերությունների վրա, հետագա ուսումնասիրողների ուշադրությունը այդ հարցերի շուրջը կենտրոնացնելու նպատակով։

Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ բոլոր աշխատություններում առավել կամ պակաս չափով նկատվում է, մի կողմից պատմական իրականության որոշ կողմերի գունազարդման, իսկ մյուս կողմից՝ որոշ իրողությունների անտեսման կամ նվազեցման տենդենց։ Այդ արվում է փաստերի նկատմամբ ինքնակամ վարվելու, նրանց մի մասը, հաճախ ընդհանուր կապակցությունից աղճատելու և ցցուն կերպով ներկայացնելու, իսկ մյուս կարգի փաստերն էլ ամենևին չհիշատակելու հետևանքով։ Նման միակողմանի մոտեցումը կամա թե ակամա ուսումնասիրողին հեռացնում է տվյալ պատմական էպոխան իր բոլոր կողմերով ու երևույթներով օբյեկտիվորեն ներկայացնելու և նոր միայն նրանց մարքսիստական մեկնաբանություն տալու անհրաժեշտ պահանջից։

Ցույց չի տրվում, կամ շատ անբավարար է ցույց տրվում, բոլշևիկյան պարտիայի առաջ ծառացած դժվարությունները՝ ներպարտիական պայքարի, աշխատավորությանը բուրժուական պարտիաների ազդեցությունից դուրս բերելու և նրանց ցարիզմի դեմ ոտքի հանելու գործում։

Փոխանակ պատմական իրողությունը ամբողջությամբ ներկայացնելու և նրան մարքսիստական բացատրություն տալու, մի բան, որը անհրաժեշտ պայման է ամեն մի գիտական աշխատանքի համար, երբեմն հեղինակները բավարարվում են եղելությունը արձանագրելով։

Բերենք մի այդպիսի փաստ։ Ռևոլյուցիայի տարիների բանվորական շարժումների պատմությամբ զբաղվող հեղինակները իրավամբ առանձնահատուկ տեղ են հատկացնում և բավական մանրամասն կերպով նկարագրում Ալավերդու բանվորների 1906 թ. օգոստոսի նշանավոր գործադուլը։ Հայտնի է, որ Ս. Սպանդարյանի հետ մեկտեղ Ստ. Շահումյանը կովկասյան Բոլշևիկյան Կենտրոնի հանձնարարությամբ մասնակցել է գործադուլին։ Վերջինիս պարտությունից հետո բոլշևիկյան «Նոր խոսք» թերթում տպագրել է «Անհաջող գործադուլը» վերնագրով հոդվածը։ Շահումյանը քաջ ծանոթ էր ամբողջ Հայաստանի իրականությանը և մասնավորապես Լոռու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքին։

հետևաբար գործադուլի մասին նրա հայտնած կարծիքը առավել կարևորություն է ստանում։

Չնայած դրան, ուսումնասիրողները խուսափելով գործադուլին Շահումյանի տված գնահատականը մեկնաբանելուց (բացառությամբ Խ. Բաբսեղյանի, մասամբ նաև Բ. Օհանջանյանի)[1], կամ չեն հիշատակում նրա հոդվածը, կամ նշում են հարևանցիորեն, օգտագործելով միայն փաստական տվյալները։

Ստ. Շահումյանը շատ լավ գիտեր և զգում էր, որ դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո ռևոլյուցիայի վայրէջքի և ցարական ռեակցիայի ուժեղացման պայմաններում, 1906 թ. օգոստոսին բանվորների առանձին գործադուլը, որքան էլ որ նոր հզոր լիներ, չէր կարող մեծ հաջողության հասնել, ուստի գտնում էր, որ բանվորները պետք է համաձայնվեին ադմինիստրացիայի արած զիջումներին և դրանով վերջացնեին գործադուլը։ Նա գործադուլի պարտության պատճառը համարում է բանվորների քաղաքական գիտակցության պակասը, թույլ կազմակերպվածությունը, գործադուլին դիմանալու համար անհրաժեշտ նյութական միջոցների բացակայությունը, ինչպես նաև այն, որ գործադուլավորները բանակցությունների ժամանակ չլսեցին սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներին։

Աշխատություններում ռևոլյուցիայի հետ կապված այս կամ այն երևույթի կոնկրետ ուսումնասիրությունը երբեմն փոխարինվում է Ռուսաստանի պատմությունից վաղուց արդեն հայտնի դրույթների կրկնությամբ։ Ռևոլյուցիան ամբողջ Ռուսաստանում միևնույն հունով ընթանալով հանդերձ ամեն մի ազգային շրջանում ունեցել է իր յուրահատկությունը՝ կախված տվյալ երկրամասի տնտեսական, քաղաքական կյանքի զարգացման աստիճանից, աշխատավորության իրավազրկության ու շահագործման կոնկրետ չափից, պրոլետարիատի և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հասարակական կշռից ու քաղաքական հասունությունից։ Տվյալ դեպքում ընթերցողին հետաքրքրում է իմանալ ռևոլյուցիոն շարժման այս կամ այն, թեկուզ մասնակի, առանձնահատկություններն ու արտահայտման ձևերը Հայաստանում։ Դժբախտաբար ուսումնասիրողները միշտ չէ, որ իրենց հետազոտությունը կատարում են այնպիսի եղանակով, որ ընթերցողին ընձեռեն այդ հնարավորությունը։

Ռևոլյուցիայի ընդհանուր պատմությունից հայտնի է, որ 1905 թ. հոկտեմբերյան համառուսական քաղաքական գործադուլները և այդ գործադուլներից սարսափած ցարի տված հոկտեմբերի 17-ի մանիֆեստը շրջադարձային կետ հանդիսացավ բուրժուազիայի ու բուրժուական պարտիաների ռևոլյուցիայի նկատմամբ վերաբերմունքի տեսակետից։ Մանիֆեստի հրապարակումից հետո բուրժուազիան իր գոհունակությունը հայտնեց ցարին և դաշինքի մեջ մտնելով նրա հետ՝ բացահայտ կոնտրռևոլյուցիոն դիրք բռնեց։ Հայ ընթերցողին, կոնկրետ դեպքում հետաքրքրում է իմանալ, թե հայ բուրժուազիան ինչ դիրք բռնեց ցարական մանիֆեստի հրապարակումից հետո, կամ ռևոլյուցիայի վերելքի նկատմամբ նրա վերաբերմունքը ինչ ձևով արտահայտվեց։

Հոկտեմբերյան դեպքերին ու հոկտեմբերի 17-ի մանիֆեստին այս կամ այն չափով անդրադարձող հեղինակները մանրամասնորեն խոսում են սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունների կողմից մանիֆեստի կեղծ բնույթը մերկացնելու մասին, սակայն ցույց չեն տալիս (բացառությամբ Դ. Մուրադյանի, մասամբ Դ. Գաբրիելյանի) հայ բուրժուազիայի դիրքորոշումը, այլ մեծ մասամբ բավարարվում են ընդհանուր դատողություններով։ Երբ կան բուրժուազիայի վերաբերմունքը բացահայտող փաստեր։

Հոկտեմբերի 24-ին Թիֆլիսի հայկական բուրժուազիայի պատվիրակությունը այցելում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին և նրա միջոցով իր շնորհակալությունն է հայտնում ցարին և կառավարությանը՝ շնորհված «ազատությունների» համար[2]։ Տալ օրինակ է, որ ուսումնասիրողները չեն բերում դաշնակցության կոնտրռևոլյուցիոն էությունը բացահայտող Երևանի ժանդարմական վարչության գրությունը. «Հոկտեմբերի 17-ին,— կարդում ենք այդ գրությունում,— բարձրագույն մանիֆեստի հրապարակումից հետո «Դաշնակցությունն» պարտքն իր լրիվ բավարարությունը հայտնեց այդ ակտի նկատմամբ, հայտարարելով, որ նա թույլ չի տա ոչ մի հակակառավարական մանիֆեստացիա...»[3]։

Բերված մի հատիկ փաստն ավելի մեծ արժեք ունի և անհամեմատ ավելի լավ է համոզում

---

[1] Տես «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում», Պետհամալսարանի ժողովածու, էջ 84—85, 104։

[2] Տես «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում», ԴԱ Պատմության ինստիտուտի ժողովածու, էջ 107։

[3] Տես նույն տեղում, ինչպես նաև „Революция 1905—1907 гг. в национальных районах России", стр. 559.

ընթերցողին, բան այդ առթիվ արվող դատողությունները, կամ բուրժուազիային ու նրա պարտիաներին ընդհանուր պարսավանքի ենթարկելը։

Ռևոլյուցիան հսկայական վերելք առաջացրեց բանվորական շրջաններում, բանակում, գյուղացիության և սովորող երիտասարդության մեջ։ Նրանցից առաջավոր, բաղաբականապես ավելի հասուն մարդիկ հարում ու աստիճանաբար անցնում էին սոցիալ-դեմոկրատիայի շարքերը։ Պատահական չէ, որ ռևոլյուցիայի ընթացքում աճում և ամրապնդվում էին սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները։ Քանակական և որակական այդ աճի համապատասխան՝ ընդարձակվում էր նրանց ազդեցությունը պրոլետարիատի և ամբողջ աշխատավորության վրա։ Ոչ միայն մյուս հեղինակները, այլ անգամ Խ. Բարսեղյանը գրելով «Բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում» խորագիրը կրող ընդհանուր առմամբ հաջողված հոդվածը, ցույց չի տվել ռևոլյուցիայի վերելքի պայմաններում բոլշևիկյան կազմակերպությունների աճի և ազդեցության ընդարձակումը։ Ճիշտ է, ինչպես Խ. Բարսեղյանը, այնպես էլ մյուս հեղինակները պատմում են ռևոլյուցիային նախորդող տարիներին, և ապա, բուն ռևոլյուցիայի ժամանակ սոցիալ-դեմոկրատական խմբակների և կազմակերպությունների առաջացման մասին, սակայն այդ բոլորը արվում է բանվորական շարժումներից, ռևոլյուցիայի վերելքի շրջանում մասսաների մեջ առաջացած բաղաբական ակտիվությունից և ընդհանրապես ռևոլյուցիոն շարժման ազդեցությունից կտրված։

Ագրարային շարժումների վերաբերյալ ուսումնասիրություններում համոզիչ կերպով վեր է հանվում գյուղացիության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, գյուղում ռևոլյուցիոն շարժումների համար նպաստավոր պայմանների առկայությունը։ Այս տեսակետից աչքի է ընկնում Ա. Մարուխյանի մոնոգրաֆիան։

Հայկական գյուղում կատարվող տեղաշարժերի, ռևոլյուցիոն շարժումների նախադրյալների բազմակողմանի լուսաբանումից հետո, երբ հեղինակները անցնում են գյուղական շարժումների շարադրմանը, զգացվում է, որ դրանք իրենց ծնունդ տվող նախադրյալների համեմատությամբ անբավարար են. որոշ իմաստով հակասություն է ստեղծվում ռևոլյուցիայի նախադրյալների և ռևոլյուցիայի տարիներին գյուղում տեղի ունեցած հուզումների ու ելույթների միջև։ Ուսումնասիրողները բավականին փաստեր են բերում գյուղական շարժումների վերաբերյալ, սակայն դրանք այնքան զորեղ ու բազմակողմանի չեն, որ կարողանան վերացնել զգացվող անհամապատասխանությունը։

Փոխանակ իրենց հետազոտությունը այնպես տանելու, որ եղած հնարավորությունը իրականության չվերածվելու պատճառները պատմական մի շարք հանգամանքների միջոցով հիմնավորապես բացատրվեն, ուսումնասիրողները ամեն կերպ փորձում են՝ գյուղական շարժումները ավելի ուժգին ու ծավալուն ներկայացնելու միջոցով լուծել այն։ Դրա հետևանքով էլ գյուղացիների կողմից հարկերը ժամանակին չվճարելու, այն սահմանված վայրում չհանձնելու վերաբերյալ փաստերի կամ գյուղացիների կողմից ներկայացվող բողոքների մասին, որոնք կապիտալիզմի զարգացման շրջանից սկսած միշտ էլ եղել են, երբեմն փրուն ձևով է խոսվում։

Ուսումնասիրողներից Ռ. Մովսիսյանը ամենից ավելի հանգամանորեն է կանգ առնում գյուղացիական շարժումները թույլ արտահայտվելու պատճառների բացահայտման վրա։ Նա ցույց է տալիս, որ Հայաստանում կապիտալիզմի համեմատաբար թույլ զարգացման հետևանքով թույլ էր նաև արդյունաբերական պրոլետարիատը, ուստի և նրա ազդեցությունն ու ղեկավարը օգնություն գյուղացիությանը։ Ցարիզմի կողմից հրահրված հայ-ազգրենջանական կոտորածները, ինչպես նաև հայ աշխատավորության վրա դեռևս բավականին ազդեցություն ունեցող բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կոնտրռևոլյուցիոն բաղաբականությունը զգալի չափով վնասեցին գյուղացիության ռևոլյուցիոն պայքարի ծավալմանը։ Այս բոլորին պետք է ավելացնել նաև մի մոմենտ։ Հայաստանի գյուղացիության գերակշռող մասը՝ 86%-ը պետական գյուղացիներ էին, իսկ մնացած՝ 14%-ը միայն կալվածատիրական։ Հայտնի է, որ պետական գյուղացիների շահագործումը համեմատաբար՝ ավելի թույլ էր, նրանք տնտեսական ավելի բարվոք վիճակում էին, բան կալվածատիրական գյուղացիները։ Այս հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չթողնել գյուղացիական ռևոլյուցիոն շարժումների վրա։ Հետևաբար գյուղացիական շարժումների թուլության պատճառների մասին խոսելիս չպետք է այն անտեսել։

Բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը և պատմական տարբեր էպոխաներում նրա դրսևորումների ուսումնասիրությունը և գիտական ընդհանրացումը մեր պատմագրության ամենակարևոր պրոբլեմներից մեկն է։ Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանը

այս տեսակետից կարևոր է նրանով, որ առաջին անգամ այդ դաշինքը ձևավորվեց, հետևաբար այդ հարցը պետք է, որ մեծ կարևորություն ստանար և մանրակրկիտ կերպով ուսումնասիրվեր։

Դժբախտաբար ուսումնասիրողների մեծ մասը անտեսում և ամենևին չեն անդրադառնում այս խնդրին։ Ռ. Մովսիսյանը և Ծ. Աղայանը բավականին կանգ են առնում այս կարևոր հարցի վրա, շարադրում բոլշևիկների տեսակետն ու վերաբերմունքը, խոսում դաշինքի դրսևորման առանձին փաստերի՝ 1905 թվականի Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլին շրջակա գյուղերի գյուղացիների մասնակցության մասին։ Այսուհանդերձ, նրանց մոտ ևս, հարցը լրիվ ու ամբողջական ձևով չի լուսաբանվում, և ընթերցողի համար ի վերջո պարզ չի դառնում, Հայաստանում կար բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինք, թեկուզ լիներ այն թույլ ինչպես Ռուսաստանում, թե՞ առկա էին միայն այդ դաշինքի սաղմերը։

Ճիշտ է, փաստերի ժլատության պատճառով այս խնդրի պարզաբանումը դժվար է, սակայն որքան դժվար է, այնքան էլ հետաքրքիր է, ու կարևոր։

Անշուշտ թերություն պետք է համարել այն, որ աշխատություններում տարբեր հարցերի կապակցությամբ բերվում են շատ արժեքավոր փաստեր, բայց դրանց սկզբնաղբյուրները երբեմն չեն նշվում։ Այլ խնդիր է, երբ բերվող փաստը այնքան հանրահայտ է, որ աղբյուրը նշելու անհրաժեշտություն չի զգացվում, սակայն մենք ամենևին նկատի չունենք այդպիսիները։

Կան հարցեր, որոնց մասին հնարավոր չէ ընդհանրացված ձևով խոսել, ուստի անխուսափելիորեն, թեկուզ և շատ համառոտակի, անհրաժեշտ է կանգ առնել նաև առանձին աշխատությունների վրա։

Հրատարակված մենագրությունների մեջ ամենից ավելի ծանրակշիռն պրոֆ. Ծ. Աղայանի «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» խորագիրը կրող ուսումնասիրությունն է։

Աշխատությունն ամենից առաջ մեծ արժեք է ստանում Հայաստանի և Վրաստանի տարբեր արխիվներից, ժամանակակից մամուլից, թեմային վերաբերող այլևայլ ուսումնասիրություններից և մեմուարային գրականությունից առատորեն մեջ բերվող փաստերի շնորհիվ։ Գնահատելի է այն, որ հեղինակը 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը նկարագրելուց, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը, նրանց կատարած աշխատանքը բանվոր դասակարգի ու գյուղացիության ծավալած ռևոլյուցիոն շարժումների բուն պատմությունը տալուց հետո, առանձին գլուխներ է հատկացրել ցարիզմի կողմից հրահրված հայ-ադրբեջանական կոտորածներին և այդ կոտորածները կանխելու խնդրին, ինչպես նաև հայ հասարակական մտքի զարգացման վրա ռևոլյուցիայի ունեցած ազդեցությանը։

Պրոֆ. Աղայանը ցույց է տվել Անդրկովկասի ականավոր բոլշևիկներ՝ Ստ. Շահումյանի, Ալ. Ջապարիձեի, Մ. Ազիզբեկովի, Պ. Մոնտինի, Սիմոն Տեր-Պետրոսյանի (Կամոյի) և շատ ուրիշների գործադրած եռանդն ու ջանքերը հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու գործում։ Հեղինակը վեր է հանել ու հետաքրքիր ձևով շարադրել հայ և ադրբեջանական պրոգրեսիվ գործիչներ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ղ. Աղայանի Ջ. Ջաբարլիի, Ջալիլ Մամեդ Կուլիզադեի, Ա. Սաբիրի և շատ ուրիշների ծավալած գործունեությունը երկու հարևան ժողովուրդների միջև բորբոքված եղբայրասպան կոտորածներին վերջ տալու համար։

Հեղինակը տվել է բոլշևիկյան մամուլի խոշոր ազդեցությունը հայ հասարակական մտքի զարգացման վրա, ինչպես նաև հայ պրոլետարական գրականության սկզբնավորումն ու զարգացումը, ռևոլյուցիայի ազդեցությունն ու արտահայտությունը դեմոկրատական գրականության և արվեստի տարբեր բնագավառներում։ Ցանկալի էր, որ սակայն շոշափվեր այս հարցերը ավելի խորը լուսաբանում ստանային։

Պրոֆ. Ծ. Աղայանը Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունը տալիս է ոչ թե ըստ շարժման զարգացման էտապների, այլ ըստ առանձին վայրերի։ Մի վայրում սկսվում է ռևոլյուցիոն շարժումների նկարագրությունը 1903—1904 թթ. և հասցվում է մինչև 1907 թվականը, ապա անցնում շարժման մի այլ օջախի պատմությանը՝ ռևոլյուցիայի սկզբից մինչև վերջը։ Եվ այս եղանակով առանձին ենթագլուխներով տրվում են ռևոլյուցիոն շարժումները Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Երևանում և Կարսի մարզում։ Դեռ ավելին, անգամ միևնույն՝ «Ռևոլյուցիոն շարժումները Ալեքսանդրապոլում» ենթագլխի տակ, նախ տրվում են բանվորական շարժումները, ապա՝ առանձին ձևով զինվորական ելույթները։ Այնպես որ, նույն են-

թագլխում շարադրանքը երկու անգամ սկսվում է 1904—1905 թթ. և հասցվում մինչև 1907 թվականը։ Ռևոլյուցիայի հիմնական օջախներից դուրս մնացած շարժումներն էլ առանց որևէ հիմնավորման մտցվում են այս կամ այն ենթագլխի մեջ։ Այսպես, օրինակ, Ղափանի 1907 թ. մարտի խոշոր գործադուլը տրվում է «Ռևոլյուցիոն շարժումները Ալավերդում» ենթագլխի տակ։

Սակայն կարևորը դա չէ, այլ այն, որ ընթերցողը՝ հետևելով իրար հաջորդող շարժումներին, չի կարողանում, ավելի ճիշտ, հնարավորություն չի ունենում նշմարելու Հայաստանում ռևոլյուցիայի ամեն մի էտապը, տեսնելու նրա արտահայտման չափն ու խորությունը, ռևոլյուցիոն ընդհանուր վերելքի մասին ամբողջական պատկերացում ունենալու։

Ռևոլյուցիայի ընթացքում բանվորական, գյուղացիական շարժումները աճում և ծավալվում էին, աշխատավոր մասսաները դառնում ավելի գիտակից, մարտունակ։ Ռևոլյուցիայի ամեն մի էտապ նորություններ էր բերում պրոլետարիատի կազմակերպվածության, նրա պայքարի ձևերի ու մեթոդների տեսակետից։ Այլ բան են 1905 թ. գարնան շարժումները, այլ բան՝ ամռանը, երբ ռևոլյուցիոն շարժումների մեջ է ներգրավվում նաև բանակը, և բոլորովին այլ՝ նույն տարվա աշնան դեպքերը։ 1905 թ. հունվարի 9-ի «Արյունոտ կիրակիի» դեպքերից սթափված, ցարի նկատմամբ իր հույսն ու հավատը կորցնող պրոլետարիատը մեկ տարվա ընթացքում քաղաքականապես այնքան հասունացավ և այնքան կազմակերպական փորձ ու հմտություն ձեռք բերեց, որ արդեն տարվա վերջին՝ դեկտեմբերին զինված պայքարի դուրս եկավ նույն ցարի դեմ։ Հետևաբար, կարևոր է ցույց տալ ռևոլյուցիոն շարժման զարգացումը, նրա բնորոշ կողմերն ու գծերը, մի բան, որ գրեթե հնարավոր չէ աշխատության կառուցվածքի պատճառով, ուստի և նյութի մատուցման այս եղանակը անպատակահարմար է։

Աշխատությունը ծանրաբեռնված է նաև ոչինչ չավելացնող որոշ մանրամասնություններով և ոչ կարևոր փաստերով։

Պրոֆ. Վ. Պարսամյանը իր առաջ խնդիր չի դնում բոլոր փաստերի ուսումնասիրության հիման վրա շարադրել ռևոլյուցիոն շարժման մանրամասն պատմությունը այլ «...հիմնական գծերով վեր հանել Հայաստանի բանվորների ու գյուղացիների մղած ռևոլյուցիոն պայքարը 1905—1907 թվականներին, ցույց տալ դրա տեղն ու դերը ռուսական առաջին ռևոլյուցիայի պատմության մեջ»[1]։

Նա ռևոլյուցիոն շարժման գլխավոր փաստերը իմաստավորելու, նրանցից համապատասխան հետևություն անելու միջոցով, հաջող, սակայն, շատ համառոտ ձևով, տվել է Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունը 1905—1907 թվականներին։ Հեղինակը չի օգտագործել Վրացական և Հայկական ՍՍՌ-ների Կենտրոնական Պետական արխիվներում պահվող հարուստ նյութերը, որի հետևանքով ռևոլյուցիոն շարժման կարևոր փաստեր երբեմն վրիպել են նրա ուշադրությունից։

Պրոֆ. Վ. Պարսամյանի աշխատանքը գրված է գիտական, պարզ ու անպաճույճ ոճով։

Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած հոդվածների ժողովածուն ընդհանուր առմամբ հաջողված է։

Այնտեղ բանվորական շարժումները տրված են ոչ թե ամբողջ ռևոլյուցիայի, այլ միայն 1905 թվականի ընթացքում։ Մեր կարծիքով նպատակահարմար չէ շարադրանքը այսպես կիսատ թողնել, և ինչ ելակետ էլ որ ընտրած լինի հեղինակ Դ. Մուրադյանը, նրա նկատառումը չի արդարանում, քանի որ բավական խոշոր շարժումներ են եղել, և հարուստ փաստեր պահպանվել նաև 1906, 1907 թվականների վերաբերյալ և բացի այդ, ժողովածուի մեջ մյուս խնդիրների՝ գյուղացիական շարժումների, բոլշևիկյան մամուլի, Երևանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունը հասցված է մինչև ռևոլյուցիայի վերջը՝ 1907 թվականը։ Հոդվածը, չնայած փաստական նյութին հեղինակի լավատեղյակությանը, գրված է չափազանց զուսպ ու չոր լեզվով։

Ա. Համբարյանը հարուստ նյութերի անալիզի միջոցով տալիս է հայկական գյուղի ու գյուղացիության պատկերը, նրա շահագործման ձևերը, տնտեսական ծանր վիճակն ու քայքայումը։ Հեղինակը, սակայն, քիչ է բերել փաստեր, սոցիալական շարժումների և գյուղում սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունների կատարած աշխատանքի վերաբերյալ։

Խ. Բարսեղյանը ավելի ճիշտ կվարվեր, եթե Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար գործիչներ Ալ. Մալխասյանի, Մ. Միրաքյանի (Շանթ), Աս. Մռավյանի, Լ. Հովսեփյանի և ուրիշների կենսագրական համառոտ ակնարկը տար տողատակի ծանոթագրությունների ձևով՝ նյութի ընդհանուր շարադրանքը չխախտելու նպատակով։ Հաջողված է Ե. Խալեյանի

[1] Վ. Պարսամյան. Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., էջ 4։

«Հայկական բոլշևիկյան մամուլը Անդրկովկասում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին» հոդվածը։

Երևանի Պետական համալսարանի ժողովածուն ավելի մեծ ընդգրկում ունի, ուստի և առավել հարուստ նյութ է պարունակում և ավելի բազմակողմանիորեն ծանոթացնում ռևոլյուցիոն շարժումների հետ։ Վերը հիշատակած խնդիրներից բացի, նրանում առանձին հոդվածների միջոցով արտացոլվել են ՌՍԴԲՊ Կովկասյան Միության, Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը, Կովկասյան բանակի ռևոլյուցիոն շարժումները և ռուսական ռևոլյուցիայի ազդեցությունը Իրանի ու Թյուրքիայի ռևոլյուցիոն շարժումների վրա հարցերը։

Բ. Օհանջանյանը բանվորական շարժումների պատմությունը տվել է ամբողջապես, սակայն հոդվածում տեղ են գտել նաև վրիպումներ։ Ալավերդու 1905 թ. մարտի գործադուլի մասին խոսելով հեղինակը գրում է, որ գործադուլը սկսվեց փետրվարին, գործադուլավոր բանվորները ներկայացրին 27 կետից բաղկացած պահանջներ և, որ ընկերության ղեկավար Պոլմարի խընդրանքը նահանգապետից կամ փոխարքայից զինված ուժ ստանալու վերաբերյալ մնացին անհետևանք[1]։ Իրականում գործադուլը սկսվել է ոչ թե փետրվարին, այլ մարտի 8-ին (հեղինակների մի մասի կարծիքով՝ 5-ին)։ Գործադուլավորները ներկայացրել են 28 կետից բաղկացած պահանջներ, Պոլմարի հեռագրի համաձայն Ալավերդի են ժամանել կուղակային հարյուրյակ, գավառապետը և պարսկական հյուպատոսարանի ներկայացուցիչը պարսկահպատակներին «խելքի բերելու» համար։

Չնայած մասնակի թերություններին հաջողված են Ս. Դինարյանի «ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կազմակերպումը և նրա գործունեությունը 1903—1906 թթ.» և Ռ. Մանուկյանի «Ռևոլյուցիոն շարժումները Կովկասյան բանակում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին» հոդվածները։

Դ. Գաբրիելյանի «1905—1907 թթ. ռևոլյուցիան Հայաստանում» Միութենական ժողովածուի մեջ զետեղված հոդվածը իրավացիորեն գրված է նաև ռուս ընթերցողի կամ Հայաստանի պատմությանն ոչ այնքան ծանոթ ընթերցողի պահանջները բավարարելու տեսանկյունով։ Հոդվածի ընդհանուր որակը անհամեմատ բարձր է նրա առաջին հրատարակությունից։

Հայաստանի պատմության, առավելապես նրա նոր և նորագույն շրջանի պատմության խընդիրներում ուշադրության չի արժանանում և ըստ արժանվույն տեղ չի տրվում նյութերի և փաստաթղթերի հրատարակման շատ պատվաբեր և կարևոր գործին։ Այդ տեսակետից ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի և Հայաստանի Կենտրոնական Պետական արխիվի կողմից պատրաստված նյութերի ու փաստաթղթերի ժողովածուի հրապարակ գալը ինքնին ողջունելի երևույթ է։

Ժողովածուի առաջին բաժնում զետեղված են Վ. Ի. Լենինի, Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի Կոմունիստական պարտիայի այլ ականավոր գործիչների ռևոլյուցիային վերաբերող հոդվածները, ճառերն ու նամակները, պարտիական համագումարների և կոնֆերենցիաների նյութերը, իսկ 2-րդ բաժնում՝ արխիվային փաստաթղթեր, բոլշևիկյան կոչեր ու թռուցիկներ, լրագրային նյութեր։ Եթե նկատի ունենանք, որ ժողովածուում տեղ են գտել ոչ միայն Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Կենտրոնական Պետական արխիվների Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տեղական ֆիլիալների արխիվների նյութերը, այլ նաև Մոսկվայի Կենտրոնական արխիվների, ժամանակի բոլշևիկյան կենտրոնական մամուլի և ՍՍՌՄ Ռևոլյուցիայի թանգարանի նյութերը, ապա պարզ կդառնա, թե կազմողները որքան բրտնաջան աշխատանք են կատարել։

Նրանց այդ շնորհակալ աշխատանքի շնորհիվ մասնագետները և այդ հարցերով հետաքրքրվող հասարակության լայն շերտերը իրենց ձեռքի տակ ունեն 1905—1907 թթ. Հայաստանի ռևոլյուցիոն շարժումները բազմակողմանիորեն լուսաբանող նյութերի և փաստաթղթերի ժողովածու։ Ժողովածուն լայն չափով կօգտագործվի ոչ միայն պատմաբանների, այլ նաև տնտեսագետների, գրականագետների և այլ մասնագետների կողմից։

Ցանկալի է, որ ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը Հայկական ֆիլիալի և

---

[1] Տես «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում», Պետհամալսարանի ժողովածու, էջ 118։

[2] Տես Революционное движение в Армении 1905—1907 гг., (Сборник документов и материалов), стр. 107—111, док. №№ 5—14. Պետհամալսարանի ժողովածու, էջ 182, Ս. Աղայան, Բանվորների ռևոլյուցիոն պայքարը Ալավերդում 1905—1907 թթ.։

Հայկական ՍՍՌ Կենտրոնական Պետական արխիվի այս խրախուսելի նախաձեռնությունը պատահական բնույթ չկրի և այսուհետև պարբերաբար հրապարակ գան մեր ժողովրդի անցյալի պատմության տարբեր ժամանակաշրջանները լուսաբանող նյութերի ժողովածուներ։

Անշուշտ, ժողովածուն ավելի լավ կծառայեր իր նպատակին և ավելի բարձրարժեք կլիներ, եթե նա զերծ լիներ մի քանի այն կարգի թերություններից, որոնցից հնարավոր էր խուսափել։

Այսպես, ժողովածուից դուրս են մնացել արժեքավոր փաստաթղթեր։

1903 թվականի հունիսի 12-ի ցարական օրենքը հայտնի է, որ մեծ հուզումներ և մասսայական բողոքներ առաջացրեց հայ ժողովրդի տարբեր խավերում։ Այդ դեպքերի վերաբերյալ արխիվներում պահվող բազմաթիվ փաստաթղթերից և ոչ մեկը չի բերված, թեև ժողովածուի մեջ կան 1903 թվագիրը կրող այլ փաստաթղթեր։

Ինչպես հայտնի է, հայ գյուղացիությանը տիրողների դեմ ոտքի հանելու և գյուղացիական շարժումների հետագա զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության Կոմիտեի 1905 թվականի մարտի 19-ի հայ գյուղացիությանը ուղղած կոչը։ Այս կարևոր փաստաթուղթը, որը պահվում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվում, ինչպես նաև Ալավերդու 1905 թ. նոյեմբերյան գործադուլի մասին «Կավկազսկիյ ռաբոչի լիստոկ» թերթի հայտնի հոդվածը տեղ չեն գտել ժողովածուի մեջ։

Ինքնին հասկանալի է, որ փաստաթղթերի հրապարակման ժամանակ պահանջվում է զգույշ և բարեխիղճ աշխատանք, որպեսզի հրատարակվող փաստաթղթերը լրիվ հարազատ մնան բնագրերի տեքստերին։ Բնագրի նկատմամբ փոքրագույն շեղում անգամ, եթե այն չի նշվում հրատարակիչների կողմից, կարող է ուսումնասիրողների համար այլևայլ մեկնաբանությունների, անգամ թյուրիմացությունների տեղիք տալ։ Դրա հետևանքով պատմական իրողություններ կարող է միակողմանի, սխալ արտացոլում ստանալ։ Դժբախտաբար ժողովածուի մեջ կան փաստաթղթեր, որոնք կրճատումներով են բերված, սակայն այդ մասին դատապարտելի կերպով ոչինչ չի ասվում կամ նշվում։

Դիմենք փաստերին։ Ալավերդու գործարանի ադմինիստրացիայի հաղորդումը բանվորների պահանջների և այդ պահանջները բավարարելու մասին № 25 փաստաթղթում (1905 թ. ապրիլ) կրճատված է վերջին 28-րդ կետը, սակայն ոչ տեքստի մեջ բազմակետերով և ոչ էլ վերնագրում չի նշված այդ կրճատումը։ Երևանի գավառապետի ղեկուցագիրը Կովկասի ոստիկանության պետին Ալեքսանդրոպոլի գաղտնի ժողովի և պրոկլամացիաներ տարածելու մասին № 103 փաստաթղթից (1906 թ. սեպտեմբեր) նույնպես առանց նշելու դուրս է գցված մի ամբողջ պարբերություն։

Ընդունված կարգ է, որ փաստաթղթերի ժողովածուներ հրատարակելիս հիմք է ընդունվում և խիստ պահպանվում ժամանակագրությունը։ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների նյութերի և փաստաթղթերի ժողովածու կազմողները նույնպես ելել են այդ ճիշտ սկզբունքից և ամեն մի բաժնի նյութեր դասավորել ժամանակագրական կարգով։ Սակայն նրանք մինչև վերջ հետևողական չեն եղել ու հավատարիմ չեն մնացել պրակտիկայում վաղուց իրեն արդարացրած այդ սկզբուններին և թույլ են տվել ոչնչով չարդարացվող բազմաթիվ խախտումներ։

Ժամանակագրությունը անընդհատ խախտվում է միևնույն տեղի փաստաթղթերը իրար մոտ կենտրոնացնելու պատճառով, սակայն միևնույն վայրի փաստաթղթերի մեջ անգամ խրոնոլոգիան չի պահպանվում։ 7

Այսպես, օրինակ, «Բանվորական շարժումներ» ենթաբաժնում № 42 1905 թ. նոյեմբերի 25-ի փաստաթուղթը վերաբերում է Ալավերդու բանվորների գործադուլին, հաջորդը՝ 1905 թ. դեկտեմբերի նույն գործադուլին վերաբերող փաստաթուղթ է, ապա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների Կարսի և Ալեքսանդրոպոլի շարժումների վերաբերյալ նյութերից հետո բերվում են Ալավերդու բանվորների նոյեմբերի 21-ի պահանջները (դոկ. № 55)։ Ինչ խոսք, այս փաստաթուղթը բոլոր դեպքերում պետք է տեղավորվեր № 42 փաստաթղթից առաջ։

Գյուղացիական շարժումները ենթաբաժնում ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության գյուղացիներին ուղղված 1905 կոչից անմիջապես հետո (դոկ. № 131) բերվում է Հաղպատի գյուղացիների 1903 թ. ելույթի, ապա 1906—1907 թթ. շարժումներին վերաբերող նյութերը (դոկ. №№ 132—143)։

«Ռևոլյուցիոն հուզումները զորամասերում» ենթաբաժնում №№ 214—218 1905 թ. մարտի փաստաթղթերից առաջ տեղավորված է նույն թվականի հոկտեմբերի 31-ի թվագիրը կրող մի թղթակցություն (դոկ. № 113), միայն այն պատճառով, որ այդ թղթակցությունը տպագրված է «Պրոլետարիի» թերթում։ Նույնօրինակ խախտումներ կարելի է տեսնել նաև «Մառայողներ և սովորողներ ռևոլյուցիոն շարժումներում» ենթաբաժնի նյութերի դասավորման մեջ։

Այսպիսով, ժողովածու կազմողները մերթ փաստաթղթի կարևորությունը նկատի ունենալով, մերթ նույն վայրին վերաբերող նյութերը իրար մոտ հաջորդաբար տեղագրելու նկատառումով խախտել են ժամանակագրությունը։ Արդյունքը եղել է այն, որ նյութերն ու փաստաթղթերը դասավորելու սկզբունքն ոչ ըստ թեմատիկայի և ոչ էլ ըստ ժամանակագրության խստորեն չի պահպանվել։

Ժողովածուն միայն կարող է շահել, եթե նրան կցվեր առաջաբան և ծանոթագրությունները կազմվեին ավելի լրիվ ու մանրամասն։

Կարելի է 1905—1907 թթ. ռևոլյուցիոն շարժումներին նվիրված ուսումնասիրությունների՝ մենագրությունների, ժողովածուների դրական կողմերի, ինչպես նաև թերությունների մասին շատ ավելին ասել, սակայն դրանից ոչինչ չի փոխվի։ Եզրակացությունը բոլոր դեպքերում մնում է նույնը։ Կատարված է մեծ աշխատանք, վեր է հանված և լայն հասարակայնությանը ներկայացված երկուսուկես տարվա և ոչ միայն այդ տարիների ռևոլյուցիոն շարժումները՝ բանվորների, գյուղացիության, զինվորության և սովորող երիտասարդության շրջանում, բացահայտված է բոլշևիկյան կազմակերպությունների ու խմբերի կատարած խոշոր աշխատանքները։ Պատմաբանների ջանքերի շնորհիվ առաջին անգամ վեր է հանված ու ճշտված շատ նոր փաստեր, գործադուլային շարժումների, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների և նրանց առանձին անդամների գործունեության վերաբերյալ։

Պետք է ցանկանալ միայն, որ ռևոլյուցիոն շարժումների պատմության ուսումնասիրության կարևոր գործը կատարվի գիտական ավելի բարձր մակարդակով։

Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ